Գէորգ Մեսրոպ ունի հետեւեալ ուսումնասիրութիւնները.
— Քրիստոնեական մուտքը ի հայս (1910)։
— Ուրարտու կամ Հայաստանի նախաբնիկները (1911)։
— Պատմ. Հայ Եկեղեցւոյ, 2 հատ. (1914)։
— Հին հայերը (Բնն. Պատմ. Հայոց, 1915)։
— Հայաստան (աշխարհագր. պատմ. վիճակագրական տեսակէտով, 1919)։
— L'Armenie (նոյնին ֆրանսերէնը, 1919), եւայլն։
1929 մայիս 26 ին կատարուեցաւ Գէորգ Մեսրոպի Քսան եւ հինգամեայ գրական եւ ուսուցչական Յոբելեանը։

ԳԷՈՐԳ (ՄՀՏ.) ՌՈՒՍՃՈՒԽՑԻ.— Ուխտաւորութեամբ այցելած է Ս. Յակոբի վանքը. 1781ին Լաւոդիկէի եկեղեցիին հոգետան կից խանութներէն մին իր ծախքովը շինել կուտայ սա յիշատակարանով. «Ի պատրիարքութեան տեառն Յովակիմայ դիտապետի, այս հոգետունս դրան մերձ եղեալ զոր ի ներ հոգետուն մտեալ է. վերջն առեցեալ եղև արդեամբ Ռուսճուխցի մահ. Գեորգին վասն իւր ծնողացն և որդւոյն Յովհաննէսին և համայն ննջեցելոց հոգւոյն յիշատակ է, թուին ՌՄԼ (=1781) (Սիօն, 1868, էջ 162)։

ԳԷՈՐԳ ՎՐԴ. ՃԱՆՄԸՋԵԱՆ.— (Տե՛ս էջ 66). զանձապետ եւ հաշուապալ (1929). անդամ Տն. Ժողովի (1929)։

ԳՐԻԳՈՐ ԱՐԾԿԵՑԻ.— (Տե՛ս էջ 71). որդի Եղեգիի և Գոհարի, ՊՂ (= 1441) թուին Երուսաղէմի մէջ կընդօրինակէ նաեւ Յայսմաւուրք մը։ Գրիգոր քհ. կրօնաւոր իր Շնաւփոր «ապաշխարող» քրոջը հետ Երուսաղէմ կուգայ և կ'ստանայ այս Յայսմաւուրքը։ Այս ձեռագիրը կը գտնուի Վենետիկի Ս. Ղազարի մատենադարանը։

ԳՐԻԳՈՐ ԵՊՍ. ԱՌ. ԿԱՖԱՑԻ.— Ուխտաւորութեամբ այցելած է Ս. Յակոբի վանքը, ինչպէս կ'երեւի Նախիջեւանի Ս. Լուսաւորիչ եկեղեցիին հետեւեալ յիշատակարանէն. «Եղև ծրագրութիւն մատենագիր յիշատակարանիս ի յաշխարհիս Հոնաց՝ որ այժմ կոչի Ղրիմ. ի մեծի գիւղաքաղաքիս Ղարասու ի քրիստոնեայ ժողով վայրիս ի հողայարմար տներս առ ափս եղեր գետոյն ընդհովանեաւ սրբանորոգ տիրաբնակ սուրբ Աւգսէնդ եկեղեցւոյս, եւ այլ սրբոց խորանացս՝ եւ կաթողիկոսութեան